46

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Հայ-ռուսական համալսարանի
գիտական գծով պրոռեկտոր, փ.գ.դ. պրոֆեսոր

Պ.Ս. Ավետիսյան

« 24» հունվարի 2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋ ՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Լալա Արշավիրի Գրիգորյանի «Հանցագործության միջնորդավորված կատարման համար քրեական պատասխանատվության տեսական և գործնական հիմնախնդիրները» վերտառությամբ ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Հանցագործության միջնորդավորված կատարմանն առնչվող հարցերը լիարժեք ուսումնասիրված չեն իրավական գրականությանում, բացակայում են տվյալ թեմային վերաբերող համալիր հետազոտություններ: Ակնհայտ է, որ հանցագործության միջնորդավորված կատարմանն առնչվող հարցերը վերաբերում են ոչ միայն հանցակցությանը, այլև քրեական իրավունքի այլ ոլորտներին, ինչպիսիք են հանցագործության օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը, արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները: Պետք է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքում հանցագործության միջնորդավորված կատարման վերաբերյալ նորները համակարգված չեն, հանդես են գալիս որպես քր. օր-ի ընդհանուր մասի տարբեր ինստիտուտների բաղկացուցիչ տարրեր: Այդ նորմերը չեն կարող կիրառվել այլ կերպ, քան համալիր ձևով, ուստի հանցագործության միջնորդավորված կատարմանն առնչվող հիմնահարցերը նույնպես չեն կարող հետազոտվել մեկուսի:

Հանցագործության միջնորդավորված կատարման վերաբերյալ գոյություն ունեցող օրենսդրական կարգավորումը լուծում չի տալիս հիմնախնդրին վերաբերող բոլոր վիճահարույց հարցերին: Մասնավորապես՝ օրենսդրորեն ամրագրված չե հանցագործության ինստիտուտից առանձին հանցանքի միջնորդավորված կատարման հնարավորությունը, որակման ընթացքում դժվարություններ կարող են առաջացնել հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում փաստական սխալին, սահմանազանցմանը, չավարտված միջնորդավորված կատարմանը վերաբերող հարցերը: Քննարկման կարիք ունեն նաև միջնորդավորված դրդչությունը,

օժանդակությունը և կազմակերպմանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հանցագործության միջնորդավորված կատարմանն առնչվող որակման այլ հարցեր:

Հանցանքի միջնորդավորված կատարմանն առնչվող հարցերի վերաբերյալ նոր մոտեցումներ են ամրագրվել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում: Այդ առումով էապես կարևորվում է նաև Նախագծում առկա նոր իրավակարգավորումները քննարկման առարկա դարձնելը և գործող օրենսդրության հետ համեմատական վերլուծություն կատարելը:

Պետք է փաստել, որ իրականացված հետազոտությունն ընդգրկել է բավական ծավալուն առարկա՝ հանցագործության միջնորդավորված կատարման հարաբերությունները կարգավորող միջազգային և ներպետական իրավական նորմերը, Նախագծի կարգավորումները, միջազգային փորձը և դոկտրինալ աղբյուրները:

Հեղինակի կողմից հետազոտության առարկան կազմող վերը նկարագրված հիմնահարցերի ուսումնասիրման միջոցով հանցագործության միջնարդավորված կատարման՝ որպես քրեաիրավական ինստիտուտի էության բացահայտումը թույլ է տալիս պարզել այդ ինստիտուտի առանձնահատկությունները, ինչպես նաև նրա տեղը և դերը հարակից քրեաիրավական ինստիտուտների համատեքստում: Իր հերթին հետազոտության ընթացքում արված հետևությունները պայմանավորում են ՀՀ քրեական օրենսգրքում այն դրույթների վերաիմաստավորման և կոնկրետացման անհրաժեշտությունը:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ Լ. Գրիգորյանը հիմնականում իրագործել է իր առջև դրված ուսումնասիրության նպատակները: Վերոգրյալը հիմնավորվում է ատենախոսի կողմից առաջ քաշված հետևյալ խնդիրների լուծմամբ.

- ուսումնասիրվել է հանցագործության կատարողի օրենսդրական բնորոշման պատմական զարգացումը.
- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա սահմանվել է հանցանքի միջնորդավորված կատարման հասկացությունը և վերլուծվել են դռա հատկանիշները.
- պարզվել և մեկնաբանվել է հանցագործության միջնոդավորված կատարման և հանցագործության մասնակիցների բազմաթվության այլ ձևերի հարաբերակցությունը.
- իրավահամեմատական վերլուծության է իրականացվել Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների հանցագործության միջնորդավորված կատարման նորմերի վերաբերյալ.
- վեր են հանվել հանցագործության միջնորդավորված կատարման դրսևորումները և դրանց առանձնահատկությունները:
- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել և ներկայացվել են համապատասխան օրենսդրական առաջարկություններ:

Ուսումնասիրության տեսական հիմք են կազմել քրեաիրավական ոլորտի առաջադեմ գիտնականների գիտական աշխատությունները: Հեղինակն

ուսումնասիրելով վեր հանված հիմնախնդիրները՝ վիճահարույց հարցերի շուրջ իր գիտական միտքը համադրել է այլ գիտնականների տեսակետների հետ:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական բազայով, գրականության մեծաքանակ աղբյուրների օգտագործմամբ, հարուստ իրավական և փորձառական հիմքով: Հատկապես, ցանկանում ենք առանձնացնել հեղինակի կողմից ուսումնասիրված արտասահմանյան երկրների քրեական օրենսգրքերը, ՀՀ վճռաբեկ դատարանի, ինչպես նաև առաջին ատյանի դատարանների դատական ակտերի ուսումնասիրումը և դրանց դրույթների ստեղծագործական օգտագործումը ատենախոսությունում արտահայտած մտքերի ու արված հետևությունների հիմնավորման ժամանակ:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված 6 հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրան:

Այս ամենով հանդերձ, ներկայացված թեկնածուական թեզում առկա են որոշ վիճարկելի դրույթներ, որոնք, ընդհանուր առմամբ, չազդելով աշխատանքի դրական գնահատականի վրա, լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն: Մասնավորապես.

1. Հեղինակի կողմից ներկայացված քր.օր.-ի հոդված 38-ի երկրորդ մասում «հանցագործության կատարող» եզրույթը փոխարինել »հանցագործության կատարում» եզրույթով առաջարկությունը կհանգեցնի իրավական անորոշության, քանզի հոդված 38-ի երկրորդ մասում խոսքը գնում է միջնորդավորված կատարողի մասին, իսկ այդ հասկացության մեջ ներառել նաև կազմակերպչի, դրդչի և օժանդակողի արարքները, ինչպես առաջարկում է ատենախոսը անհիմն է:
2. Կարծում ենք, որ հեղինակի առաջարկությունը քր.օր.-ի գլուխ 7-ի վերնագիրը փոխել «Հանցագործության մասնակիցների բազմաթվությունը» վերնագրով հիմնավորված չէ: Գտնում ենք, որ «Բազմաթվություն» տերմինի օգտագործումը արհեստածին է: Ինչ վերաբերվում է բազմաթվության այնպիսի ձևերին, որոնք հանցակցություն չեն համարվում և ունեն ինքնուրույն քրեաիրավական նշանակություն, ապա այստեղ պետք է նշել ոչ միայն հանցագործության միջնորդավորված կատարումը, այլ նաև անզգուշությամբ համակատարումը և համակարգել այս նորմերը առանձին գլխում:
3. Եզրակացությունում ներկայացված 3-րդ դրույթը հեղինակի եզրահանգումն չէ, հատուկ սուբյեկտի որակման առանձնահանկությունները և կանոնները ուսումնասիրված և ներկայացված են Ս.Ս.Ավետիսյանի «Հանցակցությունը հատուկ սուբյեկտով հանցագործություններում» մենագրությունում, ռուս իրավաբաններ Կ.Վ. Օբռաժիեվա, Ն,Ի, Պիկուռովա և այլոք:

Ինչպես երևում է նշված նկատառումների բովանդակությունից, դրանք հիմնականում կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը ու պայմանավորված են հեղինակի հետագա աշխատանքներն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. Լալա Արշավիրի Գրիգորյանի ատենախոսությունը համապատասխանում է ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է հանցագործության միջնորդավորված կատարման հիմնախնդիրներին վերաբերող համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ *ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»* մասնագիտությամբ:

Քննարկվել և հավանության է արժանացել Հայ-ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի 2020 թ. հունվարի 24-ի նիստում, արձանագրություն թիվ 12 (20).

Հայ-ռուսական համալսարանի
քրեական իրավունքի և քրեական
դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ՝ պ.գ.թ., դոցենտ Ն.ՅՈՒ. ԶՈՀՐԱԲՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Ա.Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
գիտական քարտուղար՝ Լ.Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ